ԳԵՎՈՐԳ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ
Մուսալեռան թանգարան-հուշարձան համալիրի տնօրեն

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ



Արտաշես Մովսեսի Բալաբանյանը ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 14-ին, Մուսալեռի շրջանի Բիթիաս գյուղում, հողագործ-արհեստավորի ընտանիքում:

-Արտակարգ կենսագրություն չունեմ, այն օտարությունից վերադարձած և Հայրենիք գտած Հայի պատմությունն է, որի տակ, համոզված եմ, փոխելով անուններն ու ծննդյան թվականները, երկրներն ու քաղաքները, կարող են ստորագրել տասնյակ հազարավոր հայրենաբաղձ Հայեր, - ասում է նա:

Խաղաղ ապրում ու բարգավաճում էր Մուսալեռան ստորոտում գտնվող Բիթիաս գյուղի Բալաբանյանների մեծատոհմ գերդաստանը: Նրանք Հայտնի հողագործներ ու երաժիշտներ էին, որոնք մեծ հեղինակություն էին վայելում շրջակայքում և ցանկալի հյուր էին ամեն մի հարկի տակ:

1939 թ. Մուսալեռան ժողովրդի վերջնագաղթը նրանց հասցրեց Լիբանանի Այնճար կոչվող անապատը, որը մի քանի տարում չենացրին ու դարձրին փոքրիկ «Մուսալեռ»: Այստեղից էլ սկսվում է Արտաշես Բալաբանյանի կյանքի ոդիսականը: Նախ՝ դասեր վրանների տակ, հողի վրա նստած, ապա՝ հովվություն, հողագործություն...

Եվ ահա մոր նամակը հեռավոր ափերում:

-Որդի՛ս, դպրոցի տնօրենը կխոստանա քեզի ազատել ուսման վարձեն: Շուտ տուն եկուր և շարունակե ուսումդ: Առանց ուսման մարդը նման է անբան կենդանուն...

Որոշ ժամանակ սովորելուց հետո, նորից Դամասկոսում է, այս անգամ դոկտոր Սաղաթի մոտ է անցնում աշխատանքի[1]: Նա բոլորից փոքրն էր, բայց բոլորի սիրելին: Մեծ ափսոսանքով է հիշում այնտեղից հարկադրաբար հեռանալը:

1946 թ. հունվարին Արտաշեսը լսում է քաղցր հայրենականչը: Հանդավառվում է նաև բազմանդամ ընտանիքի հայրը՝ վարպետ Մովսեսը, որը հայտնի էր որպես մեծ դյուցազնամարտի մասնակից և անընկճելի քաջամարտիկ: Մեկը նրան ուզում է համոզել, որ չգնա Հայաստան, մյուսը՝ հակառակը:

-Հե՛յ ջան, քարավան, քշիր քո ճամփան...

Շատերն անհանգիստ էին, ոմանք երկմտանքի մեջ... վարպետ Մովսեսի որոշումը անբեկանելի էր...

ԲԵՑՐՈՒԹ. Մի ջին Արևելքի փոքրիկ Փարիզ: Նավահանգստում «Ռոսիա» ջերմանավը խարիսխ է գցել: Սեպտեմբերյան կիզող արև... յոթ ու կես հազար ներգաղթողներ, որոնցից վեց հազարը մուսալեռցիներ են, իրենց ավանդական թմբուկ-զուռնայով, բաց և լիքը սեղաններով:

Հայրենիքն էլ հարազատ մոր նման հոգատար իր գիրկն է բացում դարավոր պանդուխտ զավակների առջև և օժանդակում, որ տուն - տեղ ունենան: Դժվարությունները շատ էին, բայց տանելի...:

Այդ ծանր օրերին մեր մեծերն ասում էին.

-Կարիք չկա դժգոհելու: Այս վիճակը, որը շատ ծանր է թվում ձեզ, թաղավորական է մեր տեսած 1915 թ. համեմատ:

Արտաշեսն ու իր ընկերները կատարում են իրենց առաջին ուխտը՝ ոտքով Էջմիածնից հասնում Օշական:

Տարբեր հիմնարկներում ու վայրերում զանազան աշխատանքներ կատարելուց հետո, 1948 թ. նոյեմբերի վերջին նա ընդունվում է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: Դասախոսներն ու ուսանողները ջերմությամբ ու հոգատարությամբ են շրջապատում Արտաշեսի նմաններին: Ճեմարանն ավարտում է, բայց հոգևորական չի դառնում, այլ նպատակներ ուներ: Երաժշտական հովերով տարված 1954 թ. իր սիրելի դասախոս, մեծ երաժիշտ Դանիել Ղազարյանի երաշխավորությամբ, Արտաշեսի գործերն ընդունում են Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան, ավա՜ղ, աշխարհիկ վկայական չուներ և չեն ընդունում:

Պետհամալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետն ավարտելուց հետո զբաղվում է ուսուցչությամբ:

Աշխատանքին զուգընթաց մի քանի տարի վարում է Էջմիածին քաղաքի օտար լեզվի արտահաստիքային տեսչի պարտականությունները:

---

[1] Նա արաբ էր, 35-40 տարեկան, հիանալի մարդ, կինն օտարազգի էր, ունեին երկու տղա: Սովորել էր Գերմանիայում: Դամասկոսի բժշկապետն էր, խորհրդարանի անդամ և Կարմիր խաչի ընկերության նախագահ: Ուներ երեք հարկանի մասնավոր հիվանդանոց:

Ա.Մ.Բ.

Նա էր առաջին ուսուցիչը, որ Էջմիածին քաղաքում կազմակերպում է օտար լեզվի առաջավոր փորձի դպրոց և հասնում զգալի հաջողություններ:

Պրն. Բալաբանյանն արժանանում է Հանրապետական ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրինության ուշադրությանն ու խրախուսանքին: Նրա առաջավոր փորձը տարածվում է ամբողջ երկրում:

Արտաշես Բալաբանյանը նաև երաժիշտ է: Նա պատրաստել է գործիքներ և նվագում է նրանց վրա: Երկար տարիներ շարունակ մասնակցել է քաղաքային ուսուցչական քառաձայն երգչախմբին՝ միաժամանակ մասնակցելով շրջանի Կոմիտասի անվան մշակույթի տան ժողգործիքների համույթին: 1980 թ. Լենդրոշ Շմավոնյանի աջակցությամբ, Արտաշես Բալաբանյանը կազմակերպեց և ղեկավարեց «Մուսալեռ» ազգագրական երգի-պարի համույթը, որը բազմիցս ելույթներ է ունեցել մեր տոնախմբությունների ժամանակ, ինչպես նաև մասնակցել շրջանային և հանրապետական փառատոների՝ արժանանալով բազմահազար հանդիսատեսների ուշադրությանն ու որոտընդոստ ծափահարություններին:

Այսօր լրանում է նրա յոթանասունամյակը, որի կեսից ավելին նա նվիրաբերել է մանկավարժությանը: Այս ընթացքում հաշտ ու խաղաղ աշխատել է ավագ ընկերների՝ վաստակավոր ուսուցիչ և մեծ երաժիշտ Մովսես Շերբեթչյանի և Կարապետ Վարդապետյանի հետ, որոնք Էջմիածնում և շրջանում օտար լեզվի առաջին ծիծեռնակները եղան:

Արտաշեսը հպարտությամբ ասում է.

-Ես նրանց համարում եմ ոչ միայն իմ ավագ ընկերները, այլև իմ ուսուցիչները շատ հարցերում:

Տասնամյակներ առաջ նա վստահորեն բարձր դասարանցիներին պատմում էր Մուսալեռան դյուցազնամարտի, իր ծնողական սերնդի կատարած խելահեղ սխրանքների մասին և հայրենասիրական երգեր սովորեցնում, սերմեր ցանում աշակերտների հոգում, երբ նման քայլը համարվում էր վտանգավոր...

Նա Մուսալեռան հայրենակցական միության հիմնադիր (սկզբում գաղտնի) անդամներից մեկն է: Տասնամյակներ շարունակ սիրով ու անտրտունջ կատարում է այդ միության Էջմիածին քաղաքի և շրջանի պատասխանատու քարտուղարի դժվարին, բայց պատվավոր պարտականությունները:

-Իմ սիրելի ժողովուրդն ինձ դնահատում է, ուրեմն իզուր չեն անցել կյանքիս տարիները,- եզրակացնում է մեր սիրելի հոբելյարը:

Ուստի ցանկանանք նրան քաջառողջություն, հաջողություններ իր աշխատանքի մեջ ու երկար տարիների արգասավոր կյանք: